կայիշատակ Մեսրոպի անունը նոյնքան թանկ է վրացիների համար, որքան և պատմականօրէն Նրանց մօտիկ հայերին, ուստի և մենք ջերմագին միանում ենք ընդհանուր տօնախմբութեանը և սրտագին բարգաւաճում ենք բարեմաղթում հայ տպագրական իւօքին։ Ընկերութեան նախագահ պ. Ներսիսեան Դէորգի Կարէկի։

ՅՈՐԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Բուրգաս քաղաքում հրատարակուող ձախակողմեան «Մերցխալի» (Ծիծեռնակ) ամենօրեայ թերթը իր վերջին (№ 61) համարում տպագրել է հայոց գրերի 1500 և տպագրութեան 400-ամեայ յոբելեանի առիթով մի առաջնորդող յօդուած, որի մէջ, ի միջի այլոց, ասում է. «Հայ ժողովուրդը համարձակ կարող է պարծենալ իր հոգեւոր կուլտուրայի զարգացումով։ Բազմաթիւ դարերի ընթացքում հայ գրականութիւնը մաքառում էր մութ ոյժերի դէմ, ցրում մռայլը և լաւագոյն ապագայի համար ոյժեր հաւաքում։

Այդ ժամանակի ընթացքում հայ ժողովրդին շատ դժբախտութիւններ պատահեց, նա շատ անգամ վկայ եղաւ իր հայրենիքի աւերմունքին, սակայն նրա պատերազմի դաշտում յաղթանակող թշնամին միշտ պարտութիւն էր կրում կուլտուրայի հողի վրայ։ Բարձրագոյն կուլտուրան միշտ յաղթող էր դուրս գալիս։

Այսօր հայ ժողովուրդը զօրեղ է իր ազգային հաստատութիւններով։ Նա հաւաքում է իր ազգային ժողովուրդ։ Այս առաջադիմութիւն է։ Նա միջոց ունի իր ազգային քաղաքակրթութիւնը զարգացնելու, իր հոգեւոր ստեղծագործութիւնը ցոյց տալու։ Բայց նրա համարեա բոլոր հաստատութիւնները հոգեւորականութեան ձեռքումն է, նոյն իսկ նրա ազգային ժողովը էջմիածնի սինոդի մի յաւելուած է կազմում ու կաթողիկոսից կախու�ունեցող մի բան է։ Կայ ազգային զարգացում, բայց նա քահանաների զեկավարութեամբ է կատարւում, կայ հոգեւոր կուլտուրա, բայց նա կաթուղիկոսի աղօթքով ու օրհնութեամբ է առաջ գնում։ Մա յետադիմութիւն է։

Այնուհետև լրագիրը ցանկութիւն է յայտնում, որ հայ դեմոկրատիան իր ոյժերն հաւաքի և ազգային կուլտուրայի գործը իր ձեռքն առնի։ Նրա այս հոդի վրայ կատարելիք յաղթութիւնը —աւելացնում է «Մերցխալին», —հայ ժողովրդի դեմոկրատիայի յաղթութիւնը կը լինի։

—

Տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանի առթիւ Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնայ եկեղեցական զարդացում կայացաւ աշակերտական գրականերաժշտական հանդէս։ Գրական բաժինը զեկավարում էին պ. Գ. Յովհաննիսեան և օր. Խերոդիենան, իսկ երաժշտականը՝ պ. Ա. Վարդանեան։ Աւ. ուսուցիչ պ. Յովհաննիսեան բացատրեց գրերի գիւտի և տպագրութեան նշանակութիւնը ներկայ եղողներին։

էջ, սակայն և այնպէս չէ կարելի տար-

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

Մոսկւա, 14 հոկտեմբերի

Գրի և տպագրութեան կուլտուրական-պատմական մեծ տօնը, որ ներկայումս տօնում է մեր ժողովուրդը, ցայտուն ցուցանիչ է հանդիսանում նրա կենսունակութեան և գրական է նրա ապագայ առաջադիմութեան համար։

Կուրսխատուհիներ՝ Եարալեան, Կերիրեան, Աբեանդիլեան։ Ուսանողներ Խոլչեան, Ստեփանեան, Տէր-Սիմոնեան, Սրապեան, Աւետ Տէրեան, Սուրէն Թաչատրեան, Մեկնարագանեան, Սոլովեան, Մահտեսեան։

—

Թիֆլիսի Կուսանաց վանքի մայրապետը հետեւեալ հեռագիրն է ուղղել՝

«Էջմիածնի, Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայկական կուլտուրայի հանդիսաւոր մեծ օրը, հայ այբուբէնի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանին, իմ անկեղծ շնորհաւորանքներն եմ մատուցանում Ձերդ Սրբութեանը և բոլորների հետ աղօթում եմ Ամենաբարձրեալին Նախաթոռ Հայ եկեղեցու և ժողովրդի յաջողութեան համար։ Մայրապետ Թախիրեան»։

—

Մեր տաղանդաւոր բանաստեղծ Յովհ. Թումանեանը յոբելեանի առթիւ Էջմիածին է ուղարկել հետեւեալ հեռագիրը.

«Մեծ տօնի օրը լցւած եմ հայ ժողովրդի լաւագոյն ապագայի հաւատով։ Թող էս հաւատը անսասան մնայ մեր սրտերում»։

—

Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան նախագահը հետեւեալ հեռագիրն է ուղղել էջմիածին Կաթողիկոսի անունով.

«Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը յարգանք ողջունում է յանձին Ձերդ սրբութեան, հայ գրի հանդիսաւոր յոբելեանը։ Երջանկայիշատակ Մեսրոպի անունը նոյնքան թանկ է վրացիների համար, որքան և պատմականօրէն Նրանց մօտիկ հայերին, ուստի և մենք ջերմագին միանում ենք ընդհանուր տօնախմբութեանը և սրտագին բարգաւաճում ենք բարեմաղթում հայ տպագրական իւօքին։ Ընկերութեան նախագահ պ. Ներսիսեան Դէորգի Կարէկի»։